ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՃԱՊՈՆԱԿԱՆ ՖԵՆՈՄԵՆԸ

ՆՈՒՐԲԵԿՅԱՆ Լ. Զ.

Ներկայումս հետխորհրդային գրեթե բոլոր երկրների առջև ծառացած խնդիրներից է հասարակական կյանքի ոլորտների արդիականացումը, որը ենթադրում է զարգացած ժամանակակից տնտեսության առկայություն և վերջինիս համար անհրաժեշտ որոշակի մշակութային և հոգեբանական մթնոլորտի ստեղծում: Արդեն մի քանի տասնամյակ որպես արդիականացման հաջողված օրինակ է բերվում Ճապոնիան: Վերջին 150 տարիների ընթացքում Ճապոնիան, հաղթահարելով հետամնացությունը, կարողացավ առաջատար դիրք գրավել աշխարհում: Արդիականացումը Ճապոնիային հնարավորություն տվեց «հետապնդող զարգացման» մոդելից անցնելու համընթաց զարգացման և նույնիսկ աշխարհին առաջարկելու հետագա կատարելագործման ուղիներ:

Պատմականորեն քաղաքական արդիականացումը վերագրվում է քաղաքական կառուցվածքի և քաղաքական մշակույթի փոփոխությունների ամբողջությանը, որը կարելի է բնութագրել որպես հասարակության համընդհանուր կերպափոխություն: Վերջինս ընդգրկում է աշխարհականացման, ինդուստրացման, սոցիալական շարժունակության, կենսամակարդակի աճի, գրագիտության, կրթության և ԶԼՄ-ների տարածման, ազգային համախմբվածության, բնակչության քաղաքական մասնակցության ընդլայնման գործընթացները:

Քաղաքական գիտության մեջ առանձնացվում են արդիականացման երկու տիպեր՝ առաջնային (Արևմտյան Եվրոպա, ԱՄՆ, Կանադա), որն ընդգրկում է առաջին արդյունաբերական հեղափոխության, ավանդական ժառանգական արտոնությունների վերացման, հավասար քաղաքացիական իրավունքների հռչակման, հասարակական կյանքի ժողովրդավարացման ժամանակաշրջանը, և «հետապնդող արդինականացում» (Ռուսաստան, Թուրքիա, Բրազիլիա և այլն), որի դեպքում արդիականացման հիմնական գործոնը նշված երկրների սոցիոմշակութային շփումներն են առկա արդյունաբերական կենտրոնների հետ: «Հետապնդող արդիականացման» առանձնահատկություններից է այն, որ հասարակության որոշ տարրեր իրենց զարգացման մակարդակով այս կամ այն չափով կարող են համապատասխանել զարգացած երկրների համապատասխան տարրերի զարգացման մակարդակին, սակայն մի շարք այլ տարրեր դեռևս թերզարգացած են կամ ընդհանրապես բացակայում են: Արդիականացման նման

տիպի ժամանակ հասարակության զարգացումը, բրազիլացի պատմաբան Ն. Վերնեկ Սոդրիի կարծիքով, հիշեցնում է քառակուսի անիվի շարժում[1]:

«Հետապնդող» արդիականացման մոդելին հատուկ է փոխակերպվող պարամետրերի ավելի լայն գործիքակազմ՝ տեխնոգեն, սոցիոմշակութային, ժողովրդագրական, իրավական, էկոլոգիական և այլն: Արդիականացման գործընթացի հիմքը ինդուստրացումն է և ինդուստրիալ մշակույթի ստեղծումը, որում առաջնությունը տրվում է մարդկային գործոնին:

Ճապոնիայում «հետապնդող արդիականացման» գործընթացը սկսվել է XIX դարի 70-ական թթ. և տևել մինչև XX դարի 80-ական թթ.: Նշված ժամանակահատվածումՃապոնիան կարողացավ կիսագաղութային երկրից վերածվել զարգացած տնտեսություն ունեցող երկրի՝ պայմանավորված երկրի անընդհատ արդիականացմամբ: Դրա նպատակն էր Արևմուտքի օրինակով ապահովել Ճապոնիայի զարգացումը՝ շեշտը դնելով տնտեսության զարգացման սեփական մոդելի վրա: Այդ մոդելը հիմնված էր տնտեսության առաջատար ուղղությունների զարգացման, աշխատանքային հարաբերությունների առանձնահատկությունների վրա և անընդհատ ձևափոխվել է պետության ակտիվ դերի պայմաններում[2]:

Արդիականացման հաջողությունը կապված չէ երկրի քաղաքական և սոցիալական կառուցվածքի հետ: Ն. Յվետկովայի կարծիքով «պետության ցանկացած ձևում, լինի ունիտար թե դաշնություն, ժողովրդավարական թե ամբողջատիրական, ասիական երկրներում արդիականացման նախաձեռնողի դերում հանդես է եկել պետությունը»[3]: Սակայն այդ գործընթացի իրականացմանը խթանում են տնտեսական, քաղաքական և այլ խնդիրները լուծելու ժողովրդի պատրաստակամությունը, ինչպես նաև քաղաքական էլիտայի կողմից արդիականացման նպատակների և խնդիրների ձևակերպումն ու դրանց իրականացման ռազմավարության մշակումը:

Ճապոնիայի արդիականացման գործընթացում կարելի է հստակ առանձնացնել հետևյալ փուլերը.

1. *Մեյձիի ժամանակաշրջան (1868-1912 թթ.)*
2. *Սյովայի կամ հետպատերազմյան ժամանակաշրջան(1945-1980 թթ.)*
3. *Հեիսեի ժամանակաշրջան (1991 թ. ցայսօր):*

Դրանցից յուրաքանչյուրը, պայմանավորված երկրի պատմական զարգացման փուլերով, ունի իր յուրահատկությունները:

---

[1] **Содре Н. В.** *Бразилия: анализ "модели развития", М., 1976, с. 104.*

[2] **Ишикава А.** *Эволюция концепций и практики модернизации в Японии (Проблемы теории и практики управления, 2003, № 1, с. 66).*

[3] **Цветкова Н. Н.** *Страны Востока и догоняющее развитие (Что догоняет догоняющее развитие: поиски понятия, М., 2011, с. 249).*

Մեյձիի պահպանողական հեղափոխության նպատակն էր վերջ դնել վերասերմանը և ստեղծել ավանդական արժեքների վրա հիմնված նոր համակարգ: Իշխանության գլուխ եկած նոր քաղաքական ընտրախավը սկսեց արդիականացման գործընթաց՝ հստակ և հակիրճ ձևակերպելով զարգացման կարգախոսը՝ «հարուստ երկիր՝ հզոր բանակ»: Արդիականացված պետություն կառուցելու ճապոնական մոդելը տարբերվում էր եվրոպականից: Նախ, փոխակերպումներն իրականացվում էին ոչ թե ներքին զարգացման տրամաբանության շրջանակներում, այլ գաղութացման վտանգի պայմաններում: Արդիականացման շարժիչ ուժը սամուրայների ցածրակարգ և հասարակության հետադեմ խավերն էին: Բարեփոխումների հենց սկզբում առաջադրվեց «հարգանք կայսեր նկատմամբ» կարգախոսը: Կայսերական իշխանության վերականգնման սույն կարգախոսի ընտրությունը պատահական չէր և արդյունք էր հակասյոգունյան դաշինքի կողմից իշխանության օրինականացման անհրաժեշտության:

Մեյձիի բարենորոգումների առանձնահատկություններից էր նաև այն, որ Ճապոնիայում, ի տարբերություն եվրոպական երկրների, ավանդական կառույցների ճգնաժամ տեղի չունեցավ: Դա պայմանավորված էր բնակչության հարմարվողականությամբ, այսինքն՝ հասարակության կողմից այլ քաղաքակրթությունների տարբեր տարրեր յուրացվելով (առաջին հերթին չինական) այն վերածում էին սեփական ազգային արժեքների բաղադրիչի, որի հետևանքով նույնիսկ արմատական վերափոխումներն ուղեկցվում էին առանց սոցիալական ցնցումների՝ բարենորոգումների միջոցով:

Աշխարհագրական-պատմական պայմաններով պայմանավորված՝ Ճապոնիան երկար ժամանակ եղել է «աշակերտի» կարգավիճակում սկզբում՝ Չինաստանի, ավելի ուշ՝ Արևմուտքի մշակույթի ազդեցության ներքո: Չինական գիտատեխնիկական նվաճումների ընդօրինակման անհրաժեշտությունը հիմնավորվել է դեռևս IX դարի պոետ և պետական գործիչ Սուգավարա Միտիձանեի կարգախոսում՝ «Ճապոնական ոգի՝ չինական վարպետություն»: XIX դարի վերջին ճապոնացի փիլիսոփա և քաղաքական գործիչ Սեսան Սակուման այն վերափոխեց՝ առաջադրելով «արևելյան բարոյականություն՝ արևմտյան հմտություններ» կարգախոսը[4]: Թեև գիտելիքների փոխառումը ճապոնացիների համար անհրաժեշտություն էր, իսկ սեփական հոգևոր ավանդույթների առումով՝ օտարածին, այդուհանդերձ, նրանց հաջողվեց գիտությունն ու տեխնոլոգիաներն ընդօրինակելով չխարխլել սեփական ավանդական արժեքները:

---

[4] **Карелова Л. Б.** *Проблемы модернизации Японии и межкультурное взаимодействие (Вестник МГИМО-Университета, 2012, № 6, с. 184).*

Ճապոնացիներին խորթ էին նաև «ազգ», «պետություն» և այլ հասկացություններ, ուստի Մեյձիի բարենորոգումների հեղինակները փորձում էին գտնել կառավարման այնպիսի մոդել, որը կհամապատասխաներ ճապոնացու աշխարհայացքին և կընկալվեր որպես գերակայող՝ ավանդական կառույցների նկատմամբ:

Մեյձիի ժամանակաշրջանում նկատելի է նաև ճապոնական հասարակության միջազգայնացման գործընթաց, որն ապահովելու էր մուտքը «քաղաքակիրթ աշխարհ»: Հնակերպվեց «ճապոնական ոգի՝ եվրոպական գիտելիքներ» կարգախոսը, որը նոր իշխանության ազգային, ավանդական կողմնորոշման դրսևորում էր: «Ճապոնական ոգին» պահանջում էր առաջին հերթին սինթոիզմի սկզբունքներով դաստիարակություն, կայսեր՝ որպես կենդանի աստծու երկրպագում. կայսրը հանդես էր գալիս որպես պետության գլուխ, ինչպես ընտանիքում հայրը: Ուստի բոլոր ճապոնացիներն անսահման նվիրվածություն պետք է տածեին կայսեր նկատմամբ, ինչպես ընտանիքում երեխաները՝ ծնողների: Քաղաքական հավատարմության այս տեսությունը հայեցակարգվեց «պետություն-ընտանիք» հասկացության մեջ, որն իր արդիականությունը պահպանեց մինչև Երկրորդ աշխարհամարտի ավարտը:

Մեյձիի հեղափոխության քաղաքական կերպափոխումների արդյունքը սյոգունատի վերացումն էր և կայսեր միանձնյա իշխանության հաստատումը: 1889 թ. ընդունված սահմանադրությամբ Ճապոնիայում հաստատվեց դուալիստական սահմանադրական միապետություն: Կայսրը պետական անկախության կրողն էր՝ ըստ Սահմանադրության 4-րդ հոդվածի: Նրա անձը հայտարարվում էր «սրբազան և անձեռնմխելի»: Սակայն ի տարբերություն եվրոպական երկրների, որտեղ կայսրը հենվում էր իրավական նորմերի վրա, Ճապոնիայում վերջինիս երկնային կարգավիճակը պահպանվել էր բարոյաէթիկական նկատառումներով: Որպես ազգային գաղափարախոսություն՝ առաջադրվեց ազգի աստվածային ծագման գաղափարը, որի մարմնացումն էր կայսրը (սինթոիզմ): Ուստի կայսերական իշխանության վերականգնումը տրամաբանական քայլ էր:

Սահմանադրությամբ կայսրն ուներ պատերազմ և խաղաղություն հայտարարելու, պայմանագրեր կնքելու, պաշտոնյաներ նշանակելու և ազատելու իրավունք: Կայսրն ուներ նաև խորհրդարանի ստորին պալատը ցրելու իրավունք: Նրա ընդունած հրամանագրերն ունեին բարձրագույն իրավաբանական ուժ: Կայսրն էր հաստատում օրենսդիրի ընդունած օրենքները և գրավոր կարգադրություններ անում դրանց կատարման մասին:

Ստեղծվում էր երկպալատ խորհրդարան, որը հատուկ չէր ունիտար պետություններին: Ստորին՝ Ներկայացուցիչների պալատը, ձևավորվում էր չորս տարով, իսկ վերին՝ Պերերի պալատը, յոթ տարի ժամկետով: 1890 թ.

ընդունված ընտրությունների մասին օրենքով սահմանվում էր բարձր գույքային, տարիքային և նստակեցության ցենզ. ըստ այդմ՝ ընտրական իրավունքից օգտվում էր բնակչության 1%-ը: Կանայք և զինվորական ծառայողները զրկված էին ընտրական իրավունքից[5]:

Ուշագրավ է, որ նոր պետականության կայացման առաջին փուլում մտցվեց իշխանության բաժանման սկզբունքը, որը փոխառնվել էր ԱՄՆ-ի սահմանադրությունից: Ըստ Մեյձիի սահմանադրության՝ իշխանությունը կենտրոնանում էր պետական խորհրդի ձեռքին, որն ուներ երկաստիճան կառուցվածք և բաղկացած էր խորհրդակցական մարմնից և մի շարք գերատեսչություններից: Փաստացի կառավարման մարմինը երկատյան խորհրդակցական մարմինն էր, որի վերին ատյանը բաղկացած էր բարձրաստիճան պաշտոնատար անձանցից: Վերջիններս մշակում էին օրենքներ, իրականացնում բարձրագույն դատական իշխանություն, որոշում կարևոր քաղաքական հարցեր: Ստորին պալատը բաղկացած էր երկրի վարչական միավորների ղեկավարներից: Թեև այս կառույցը կարճ կյանք ունեցավ, սակայն հետագայում հիմք հանդիսացավ ճապոնական խորհրդարանի ձևավորման համար:

Ընդհանուր առմամբ Մեյձիի քաղաքական արդիականացումը բավական արդյունավետ էր, իսկ քաղաքական կառուցվածքի վերը նշված մոդելը հնարավորություն տվեց կառավարությանը համախմբելու ազգին երկրի առջև ծառացած ռազմավարական խնդիրների լուծման շուրջ: Ճապոնիայի արդիականացմամբ երկիրը հայտնվեց որակապես ավելի բարձր մակարդակի վրա, քան իր ասիական հարևանները, և օգտագործելով տնտեսական և գիտատեխնիկական ոլորտների առավելությունները՝ կարողացավ հաստատել տարածաշրջանային տիրապետություն:

Մյովայի կամ հետպատերազմյան շրջանի քաղաքական արդիականացման գործընթացը տեղի էր ունենում բռնազավթման պայմաններում: ԱՄՆ-ի համար, որը հանդես եկավ որպես արդիականացման գործընթացի նախաձեռնող, կարևոր էր վերացնել Ճապոնիայի կողմից ռազմական վտանգը և նվազագույնի հասցնել ռազմականացված նոր վարչակարգի առաջացման նույնիսկ տեսական հնարավորությունը: Ըստ ամերիկյան տեսաբանների՝ դրա համար անհրաժեշտ էր Ճապոնիայում ամուր հիմքերի վրա դնել ժողովրդավարությունը: Դա էր պատճառը, որ բարենորոգումները հիմնականում ուղղված էին ապառազմականացմանն ու ժողովրդավարացմանը, ինչպես նաև մինչպատերազմյան քաղաքական համակարգի կերպափոխմանը:

---

[5] **Богданович Т. А.** *Очерки из прошлого и настоящего Японии, СПб., 1905, с. 279-284.*

Ի տարբերություն Մեյձիի Սահմանադրության, որտեղ իշխանության աղբյուրը կայսրն էր, 1947 թվականին ընդունված ճապոնական սահմանադրության ներածական մասում մատնանշվում էր, որ իշխանություն կրողը ժողովուրդն է, որն այն իրականացնում է համաժողովրդական ընտրությամբ ձևավորված խորհրդարանի միջոցով: Այս սկզբունքը նոր սահմանադրությանը տվեց ժողովրդավարական բնույթ: Կայսրը հրաժարվեց իր աստվածային ծագումից և նոր սահմանադրությամբ դարձավ «պետության և ժողովրդի միասնության» խորհրդանիշը: Վերացվեցին գաղտնի խորհուրդը և քաղաքական խորհրդականների պաշտոնները: Կրթական բարեփոխումների շրջանակում դպրոցական ծրագրերից հանվեցին այն բոլոր սկզբունքները, որոնք քարոզում էին ճապոնական ազգի բացառիկ լինելու գաղափարը, կայսերը հավատարիմ լինելու պարտականությունը:

Նոր սահմանադրությամբ Ճապոնիայում հաստատվեց խորհրդարանական սահմանադրական միապետություն: Խորհրդարանը հռչակվեց միակ օրենսդիր մարմինը, որը ձևավորվում էր համաժողովրդական ընտրությունների միջոցով: Իսկ գործադիր իշխանության գլուխն ընտրվում էր խորհրդարանի կողմից (հոդված 67): Վերջինս ձևավորում էր կառավարությունը, որը, ըստ սահմանադրության, կազմված էր մեծ մասամբ խորհրդարանի անդամներից (հոդված 68): Գործադիր իշխանության կենտրոնական մարմինը պատասխանատվություն էր կրում խորհրդարանի առջև (հոդված 66)[6]:

Այսպիսով նոր սահմանադրությունը հստակեցրեց քաղաքական կառույցների պատասխանատվության սահմանները: Միաժամանակ այն նման չէր իշխանության հստակ բաժանման ամերիկյան մոդելին, քանի որ կառավարության անդամները համատեղում էին օրենսդիր և գործադիր իշխանության գործառույթները: Մի շարք սահմանադրական սկզբունքներ կոչված էին ամրապնդելու խորհրդարանի դերը երկրի քաղաքական կյանքում: Այն հռչակվում էր որպես «պետական իշխանության բարձրագույն մարմին» և «պետության միակ օրենսդիր մարմինը» (հոդված 41):

Ճապոնիայի քաղաքական արդիականացման գործընթացում կարևոր քայլ էր համընդհանուր ընտրական իրավունքի ներդրումը: Ի տարբերություն 1925թ. ընտրությունների մասին օրենքի՝ նոր օրենքն ընտրական իրավունքով օժտեց նաև կանանց: Ակտիվ ընտրական իրավունք ունեցող ընտրողների տարիքային սահմանափակումը 25-ից իջեցվեց 20-ի:

---

[6] Ճապոնիայի 1947 թ. Սահմանադրությունը տե՛ս http://library.by/portalus/modules/internationallaw/readme.php?subaction=showfull&id=1129983626&archive=&start_from=&ucat=1&category=1

Հետպատերազմյան շրջանի արդիականացման գործընթացում նկատելի էր քաղաքական, տնտեսական և հասարակական կյանքի ապառազմականացման միտումը: Կայսերական բանակը վերացվեց, իսկ սահմանադրության 9-րդ հոդվածով ճապոնացի ժողովուրդը հրաժարվեց պատերազմից՝ որպես միջազգային վեճերը լուծելու միջոցի: Նոր սահմանադրությամբ կառավարության գլուխը և նախարարները պետք է լինեին միայն քաղաքացիական ծառայողներ:

Քաղաքական արդիականացման գործընթացում մեծ նշանա-կություն ունեցան քաղաքական իրավունքների և ազատությունների ամրագրումը. խոսքի, ժողովների, միավորումների ազատություն, արհմիությունների, քաղաքական կուսակցությունների և հասարակական կազմակերպություն-ների ստեղծման իրավունք: Այսպիսով 1947 թ. սահմանադրությունը և անցկացված ժողովրդավարական բարեփոխումները որոշիչ դեր ունեցան քաղաքական համակարգի հետագա փոխակերպման համար:

Մեյձիի և Սյովայի փոխակերպումների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք որոշակի նմանություններ ունեն: Մասնավորապես և՛ Մեյձիի, և՛ Սյովայի ժամանակաշրջանում ընտրախավերը որդեգրեցին միանման ռազմավարություն. այն է՝ հասնել Արևմուտքի երկրների զարգացման մակարդակին, և դա իրականացրին պետության բոլոր ուժերի և պաշարների կենտրոնացման պայմաններում: Երկու դեպքում էլ նորի յուրացումը չհանգեցրեց ազգային ինքնության փոխակերպման արև-մտյանի: Սակայն արդիականացման գործընթացի իրականացման պայմանները տարբեր էին: Մեյձիի ժամանակաշրջանում Ճապոնիան փաստացի անկախ պետություն էր, սակայն միջազգային տնտեսական հարաբերություններում խճճված էր անհավասար պայմանագրերով: Սյովայի ժամանակաշրջանում երկիրը գտնվում էր հաղթող դաշնակիցների զորքերի կողմից բռնազավթման պայմաններում, սակայն անցկացվող բոլոր միջոցառումներն իրականացնում էին ճապոնական իշխանությունները, ինչը վստահություն էր ներշնչում ժողովրդին:

Տարբեր էին նաև արդիականացման շառավիղների ընտրության ձևերը: Մեյձիի ժամանակաշրջանում նախ խթանվեց տնտեսական զարգացումը, որից հետո միայն անցկացվեցին քաղաքական բարեփոխումներ՝ հենվելով պետական գաղափարախոսություն հանդիսացող սինթոիզմի վրա: Սյովայի ժամանակաշրջանում տնտեսական և քաղաքական բարեփոխումներն իրականացվում էին համալիր և միաժամանակ՝ հիմք ընդունելով ժողովրդավարական սկզբունքները, որի հետևանքով երկիրը մեծ թռիչք կատարեց և՛ որակական, և՛ քանակական առումով: Տնտեսությունն աշ-խարհում առաջատար դիրքեր գրավեց՝ վերածվելով ժամանակակից հզոր պետության, ունենալով հասուն շուկայական տնտեսության բոլոր

հատկանիշներն ու զարգացած ժողովրդավարության բոլոր ինստիտուտները: Ճապոնիայի տնտեսության արդիականացման գործընթացում մեծ էր մարդկային գործոնի դերը: Անձնակազմի ղեկավարման ճապոնական համակարգի առավելություններից էր արտադրանքի բարձր որակի ապահովումը, նրանում արտադրական գործընթացի բոլոր մասնակիցների ներգրավումը՝ սկսած ղեկավար անձնակազմից մինչև հասարակ բանվորը:

Երկրևեռ աշխարհի փլուզմամբ և Ճապոնիայի հետարդյունաբերական երկիր դառնալով՝ անհրաժեշտություն ստեղծվեց նոր քաղաքական արդիականացման համար: Հեյիսեի ժամանակաշրջանում Ճապոնիային սկսեցին սպառնալ արտաքին և ներքին նոր վտանգներ, որոնցից էր Չինաստանի քաղաքական, ռազմական և տնտեսական վերելքը, ԿԺԴՀ-ի կողմից ատոմային սպառնալիքը, նոր մարտահրավերները՝ կապված բնական և տեխնածին աղետների հետ (2011 թ. մարտի 11-ի «եռակի աղետը»), տնտեսական աճի ցածր տեմպերը, երկարատև դեֆլյացիան, բնակչության արագ ծերացումը և այլն: Երկրի ղեկավարության թույլ տված սխալների հետևանքով երկրում սկսեցին խորանալ ճգնաժամային երևույթները: 1990-ական թթ. առաջին կեսին Ճապոնիայում փորձեցին իրականացնել քաղաքական նոր բարեփոխումներ՝ ուղղված առավել արդյունավետ պետական համակարգի ստեղծմանը, քաղաքական ինստիտուտների ամրապնդմանը, քաղաքական կուսակցությունների՝ որպես քաղաքական գործընթացի սուբյեկտի դերի բարձրացմանը, քաղաքական կաշառակերության նվազեցմանը, քաղաքական ներկայացուցչության արդյունավետ գործող համակարգի ստեղծմանը, որը հնարավորություն կտար օգտագործելու ժողովրդավարության ընձեռած ամբողջ ներուժը: Այդ խնդիրների լուծման գործընթացում հատկապես կարևորվում էր քաղաքական համակարգի կանոնարկող-իրավական հիմքի արդիականացումը:

Արդիականացման վերոնշյալ ընտրախավին ընթանում էին քաղաքական համակարգի որակական փոխակերպման բարդ և երկարատև գործընթացում: Այլ խոսքով՝ քաղաքական արդիականացման գործընթացում տեղի էր ունենում ինչպես նոր, այնպես էլ փոփոխվող պայմաններին հարմարված նախկին քաղաքական կառույցների կայացման գործընթաց:

Սակայն երկրի քաղաքական ընտրախավին չհաջողվեց լուծել կառավարման արդյունավետության բարձրացման հետ կապված մի շարք հիմնարար խնդիրներ: Ուստի քաղաքական արդիականացման Հեհսեի ժամանակաշրջանը դեռ ավարտված չէ, և Ճապոնիան քաղաքական իշխանության առավելագույնս արդյունավետ մոդելի որոնման փուլում է:

ЯПОНСКИЙ ФЕНОМЕН МОДЕРНИЗАЦИИ

НУРБЕКЯН Л. З.

Резюме

Политическая модернизация — сложный и длительный процесс, в котором происходят как становление новых политических институтов, так и эволюция и приспособление старых к изменившейся действительности. Примером успешно реализованной модернизации является Япония, которая на протяжении последних 150 лет сумела преодолеть отсталость и стать передовым государством в мире. Модернизация позволила Японии перейти от модели «догоняющего развития» к нормальному поступательному развитию и уже самой искать и предлагать миру пути дальнейшего усовершенствования.

Модернизация Японии началась в 70-е годы XIX в. и продолжалась до 80-х годов XX в. За это время экономика Японии достигла уровня одной из самых развитых экономик мира. Основу такой трансформации составил процесс непрерывной модернизации, нацеленный на повторение западных образцов развития.

JAPANESE PHENOMENON OF MODERNIZATION

L. NURBEKYAN

Abstract

Political modernization is a complex and long process, during which the formation of new political institutions, as well as evolution and adaptation for the changing reality occurs. Japan is an example of a successfully implemented modernization. Over the past 150 years it has managed to overcome backwardness and to become a leading country in the world. Modernization has allowed Japan to move from the model of the "catch-up development" to the normal progressive development, and now Japan itself is looking for ways of further evolution and offers them to the world.

Japan's modernization began in the 70s of XIX century and lasted until the 80-ies of XX century. Japan was under a threat of becoming Western countries' colony, but during this time it succeeded to become a country with one of the most developed economies in the world. The basis of this transformation was a continuous process of modernization, which was aiming to repeat Western models of development.